


Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Տարեկան գին և Պոլսոյ հմր. 40 ՄԷճ.
Գաւառաց 2 Լիրա
Վեցամս. և Պոլսոյ 3 ՄԷճ.
Գաւառաց 1 Լիրա
Օտար երկիրներու 50 Ֆր.



Լ Ր Ա Գ Ի Բ

Հ Ա Ն Ա Պ Ա Չ Օ Ր Ե Ա Յ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Գուրս գնացած լրագրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ դրութիւն խմբագր
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա
թիա Սանտրքընար Հաստէսի թիւ
198, Կօթի խառն : Մասիսի գրասեն
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա
մակ չընդունուիր :
Չտարուած նամակ, յորում և՛
եւ չեն արտախր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՃԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՎՈՍՏԱՆԳՆՈՒՊՈՒԽ 20 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եգիպտական ինքիւր բարեբաղ
դարար լուծուեցաւ : Եր խտիվին
տրուելիք ֆէրմանին վրայ Բ. Գրան
և Արեւմտեան տէրութեանց միջև հա
մաձայնութիւն գոյացեր է : Եր ֆէր
մանը 1873ի ֆէրմանին բար արու
մադրութիւնները կը հաստատէ եղեր
բացի արտաքին փոխառութեանց կէ
տէն : Խտիվը պիտի կրնայ եգիպտա
կան ներկայ պարտուց կարգադրու
թեան համար փոխառութիւն կնքել
բայց այս կարգադրութիւնը կատար
ւելէ ետև Խտիվը իրաւունք չպիտի
ունենայ առանց Բ. Գրան արտօնու
թեան արտաքին փոխառութիւն կըն
քելու : 1873ի ֆէրմանը Խտիվին ուղ
ղակի գծով անդրանիկ որդուց ժա
ռանգութիւնը կը հաստատէ : արտօ
նութիւն կուտայ եգիպտական կա
ռավարութեան՝ օտար տէրութեանց
հետ առևտրական կամ ուրիշ գաշ
նադրութիւններ կնքելու : քաղաքա
կան շինելու պայմանաւ : եգիպտոսի
երմտական գործոց ամբողջ կարգադ
րութիւնը Խտիվին թողուած է՝ ար
տաքին փոխառութիւն կնքելու կա
տարեալ արտօնութեամբ : երկրին
պաշտպանութեան և զինուորական
գործութեան համար Խտիվին իրաւունք
չնորհուած էր պէտք եղած միջոցնե
րն ի գործ դնելու : կըրուի թէ տե
րութիւնը պահանջած են որ այս ի
րաւունքներն ու արտօնութիւնները
վերահաստատուին, այս փաստով որ
զանոնք շնորհելու համար Բ. Գուռն
եգիպտական տուրքն աւելցուցած
էր, և եթէ հիմա ետ առնուին,
տուրքն ալ նուազեցնել հարկ պիտի
լինի : քայց ըստ որում եգիպտական
տուրքն Օսմանեան փոխառութեանց
համար երաշխաւորութիւն տրուած
է, տէրութիւնը կը հետևեցնեն եղեր
որ եթէ եգիպտական արտօնութիւն
ները սեղմուելով տուրքն առաջուան
գումարին վերադառնայ, իրենց ձեռք
եղած գումարն մէկ մասը կերթայ :
Այս փաստը կրնար հերքուիլ խընդ
րոյն քաղաքական և երմտական մա
սերը բողոքովին զատելով, այն ատեն
Բ. Գուռն քաղաքականապէս փոստա
կար համարած արտօնութիւնները
կրնար փոխել : իսկ ըստ որում տուր
քն երկրին հարստութեան զարգաց
ման և ժամանակին պիտոյից համե
մատ պէտք է լինի, Բ. Գուռն կրնար
ընել թէ եգիպտոս այսօրուան օրս
այն նկատումներով 1843ի վիճակին
մէջ չէ, թէ այն ժամանակէն ՚ի վեր
իւր զարգացումն յառաջ գնացած է
և հետևաբար կայսրութեան ծախքն
հողալու համար միւս գաւառաց հետ
բազդատմամբ հարկաւ եղիպտոսի

տուրքն ևս աւելցնել պէտք էր : Բայց
տէրութիւններն այս կերպիւ չեն նա
յիր ինքրոյն վրայ : անոնք միշտ ար
տօնութիւն ստացող գաւառները կը
պաշտպանեն : Սամոս կղզին, որ Ար
շիպեղադոսի մէջ կարևոր դերք մ'ու
նի և հարուստ է, իւր տարեկան չորս
հազար լիւրայի տուրքն 3000 ի իջեցը
նելու յաջողեր է, հազարը տեղա
կան պիտոյից գործածելու համար :
Իսկ Փոքր-Ասիոյ մէջ գտնուած խեղճ
նահանգներու տուրքն, որք ոչ հա
զարկալիցութիւն, ոչ վաճառականու
թիւն ունին, ասորուէ ասորի բարդը
ւած ու բազմացած է, վասն զի տե
րութեան ծախքն անոնց վրայ մնա
ցած է : Պէտք է որ եւրոպայ այս պա
րագայներն ալ նկատողութեան առ
նու :

Թայմը լրագրոյն Կ. Պոլսոյ թղթա
կիցն յուլիս 13 թուով քաջած մէկ
երկար հեռագրին մէջ, վերջերս Բ.
Գրան կողմանէ անուանեալ երկու հա
րիւրի մօտ գատական պաշտօնատա
րաց վրայ կը խօսի, և կըսէ թէ վեր
ջին գատական բարեփոքմանց ինչ
ոգիէ ներշնչեալ լինելը դիւրաւ կը
հասկցուի եղած պաշտօնաբաշխու
թեան, որովհետև 183 գատական
պաշտօնատարաց մէջէն միայն 17ը
Յրիտանեայ են, այսինքն 9 Հայ, 3
Յոյն, 3 Ուրբալայի և 2 Պուրլար : Յիշ
եալ թղթակիցը կըսէ թէ այս պաշ
տօնատարաց անուանումն հասարա
կութեան վստահութիւն չպիտի կըր
նայ ներշնչել, որովհետև անոնց մէկ
մեծ մասն հարկ եղած զիտանական
տեղեկութիւնները չունին և մէկ մա
սին ալ պաշտօնական կեանքն անբիժ
չէ :

Միևնոյն թղթակիցը թուումով
լինդրոյն ալ վրայ հետևեալ հետա
քըրքըրական տեղեկութիւնները կու
տայ որոյ ճշգրութիւնը բնականաբար
չէմք կրնար երաշխաւորել :

Օսմանեան տէրութեան Եւրո
պական մասին մէջ վերջերս եղած
կորուստներուն իբրև փոխարինու
թիւն, կըսէ թղթակիցն, իսլամ աշ
խարհին վրայ Սուլթանին իշխանու
թիւնն ընդարձակելու և ամրապըն
դելու գաղափարն արքունեաց մէջ
յաճախ խորհրդածութեան նիւթ կը
լինի . . . :

Երկար ժամանակէն ՚ի վեր իսլամ
քաղաքագէտը կը տածէին այդ գա
ղափարն, որ միայն վերջերս գործնա
կան կերպարանք առնուլ սկսաւ : Եր
բոր յայտնի եղաւ թէ եգիպտոսի
Խտիվ իմացիլ վաշան հրաժարելու
պիտի հարկադրուէր, Սուլթանը փու
թաց պաշտօնանկ ընել զայն և եգիպ
տոսը կէս անկախ պետութիւն մ'ը
նող արտօնութեանց մի քանին ետ ա
ռաւ իմացիլ վաշային յաջորդէն :
Միևնոյն ժամանակ, թուումովի նը

կատմամբ ալ նման օրինակ փոքր ձեռ
նարկ մ'ընել յարմար դատուեցաւ :
Ուստի, Մեծ-Եպարքոս խոյրէատին
փաշան թուումովի պէյնի հեռագիր
մը քաշելով եգիպտոսի Խտիվին պաշ
տօնանկութիւնը ծանոյց, և յորդորեց
որ ինք (Պէյն) ալ իւր իշխանութեան
ներքև գտնուող երկիրը լաւ կառա
վարէ, և առ իւր վեհապետն՝ այ
սինքն առ Սուլթանն ունեցած պար
տականութիւնները կատարէ : Հե
ռագրին այս վերջին մասը մեծ խը
նամով դրուած էր, բայց յայտնապէս
կը յուսնէր թէ Վեհ. Սուլթանն Ե
գիպտոսի նկատմամբ բռնած ընթաց
քըն յարմար դատած ժամանակ թու
նուցի նկատմամբ ալ բռնելու իրա
ւունք ունենալը կիմացնէր :

Այս հեռագիրը խուփեց թու
նուզի պէյն, որ արդէն Սուլթանին
40 ձիաւոր Շէյխ թուումովէն Կ. Պո
լսոյ շրջիլու պահանջէն կասկած
ներ յղացած էր, և ինչպէս որ ու
րիշ անգամներ Կ. Պոլսէն յարձա
կողական գործէ մը կասկած ըրած
ժամանակ սովորութիւն ունէր, այս
անգամ ալ թուումովի Գաղղիական
ընդհանուր հիւպատոսին գլխեց, ո
րովհետև Գաղղիա Սուլթանին թու
նուզի գործոց միջամտելուն դէմ է :
Գաղղիական կառավարութիւնն ան
միջապէս գործի սկսաւ : Ընդհանուր
հիւպատոսն արդու ծանուցալի մը
զրկելով Պէյնն յիշեցուց թէ յառա
ջիկայ կորսնը վճարելու անկարող պի
տի լինի, ուստի յորդոր կարգաց որ
ժախուց խնայութիւններ ընէ, և իւր
օրինակ՝ սա իրողութիւնը մէջ բե
րաւ թէ Կ. Պոլսի 40 հատ ձիաւոր
Շէյխ փոխադրելու համար պատե
րագմական նաւ մը կը պատրաստուէր
ընդհանուր հիւպատոսն յայտարա
րեց թէ բողոքովին աւելորդ ծախք
մ'էր այս, և առաջարկեց որ զոու
շանայ ատկէ, Պէյն այս իրողութիւնն
իմացուց Մեծ-Եպարքոսին, և ձիա
ւորներէն միայն 13 հատ խոյալից
ճանրով զրկելու հրաման ստացաւ :
Թուումովէն եկած մասնաւոր լուրեր
կը ծանուցանեն թէ յիշեալ ձիա
ւորք արդէն խոյալական շողենաւով
մը ճանգայ ելած են Կ. Պոլսի գալու :
« Կէս անկախ երկիրներու վրայ
Սուլթանին իշխանութիւնն աւելցնե
լու համար ՚ի գործ դրուած այս աշ
խատութիւնը անշուշտ Սուլթանին
հաւանութեանը կարժանանան : Բայց
քիչ յոյս կայ որ յաջողին, որովհե
տև ստոյգ է որ ոչ միայն տեղական
ընդդիմութեանց պիտի հանդիպին,
որք զիւրաւ կրնան յաղթուիլ այլ և
քանի մը մեծ տէրութեանց կողմա
նէ սաստիկ ընդդիմութիւն պիտի կը
րեն : Անգղիա, Գաղղիա և իտալիա,
հիւսիսային Ալիըրիէի մէջ Սուլթանին
աղղեցութեան շափէն աւելի դորա
նալը դ ո՛հ աչօք չնկատելու լաւ պատ

ճառներ ունին : Մասնաւորապէս
Գաղղիա սաստիկ պիտի ընդդիմանայ
այս ձեռնարկին, և արդէն իւր Կ.
Պոլսոյ դեսպանը պնդած է որ ասկէ
առաջ եգիպտոսի տրուած բոլոր ար
տօնութիւնը նոր խտիվին հաստա
տատութեան հրովարտակին մէջ պա
րունակին : Եթէ Գուռն այս պահանջ
ման հաւանութիւն տայ, եգիպտոսի
ինքնօրինութիւնը վերջին գէպքերուն
պատճառաւ չտկարանալէ դատ, ու
ռաջուրնէ աւելի երաշխաւորեալ պի
տի լինի, որովհետև մեծ մասամբ
արտաքին պաշտպանութեան ներքև
պիտի գրուի : Եգիպտոսի արտօնու
թիւնները, մինչդեռ ասկէ առաջ իը
րան կողմանէ կամովին շնորհուած է
լին, այժմ արտաքին ճնշմամբ պիտի
հաստատուին : »

Կարսէն և Տիֆլիսէն Ռուսական
լրագրոց ուղղեալ նամակներուն նա
յիրով, վերջին թուրքո—Ռուսական
պատերազմին հետևանքը կովկասի
այս կողմն Ռուսոյ ձեռքն անցած
գաւառաց իսլամ բնակիչները խըմ
բովին իրենց երկիրը կը թողուն թուր
քիա դաղթելու, այնպէս որ յիշեալ
գաւառք անմարդանալու վտանգին
մէջ են : Թաշվայի գաւառին մէջ
Մահմետականք այն ատիճան չըտա
պով կը դաղթեն, որ հաւանական
ըրար բնաւ Մահմետական չպիտի մը
նայ հոն քանի մը շարակալուն մէջ :
Ճորժած իշխանը Տիֆլիսէն գրած մէկ
նամակին մէջ կըսէ թէ թէպէտ Լեզ
կիներն, որք Շէյխ Շամիլի հրամա
նաց ներքև գտնուած ապստամբաց
մեծագոյն մասը կը կաղթեն, իրենց
լեռները թողլով գաշտերը գաղթե
լու շատ արամաղիլ չեն, սակայն
170,000 Չէքքէք և իսլամ վրացիք :
որք Պաթու մի գաւառին բնակաց
90 0/0ը կը կաղթեն, գաղթելու կը
պատրաստուին : Ասոնց ցոյց տուած
գլխաւոր պատճառը Ռուսական իշ
խանութեան գո՛հ շինելն է եղեր :
Մինչև յունիս 24, հազարէն աւելի
ընտանիք Պաթու մէն Տրապիզոն դը
նացած, և անտի կարնոյ և Տիգրա
նակերտի նահանգաց մէջ Վեհ. Սուլ
թանին կողմանէ նշանակեալ գաւառ
ները զրկուած են :

ՀԵՌԱՊՈՒԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիկնոս 31 յուլիս.
Աւստրիական լրագրը ընդհանրապէս
մեծ խտութեամբ կը դատեն Օսմանեան
նախարարութեան մէջ անկող ունեցած
վերջին փոփոխութիւններն : և մասնա
ւորապէս Կայսերական Ֆրէսի լրագրը
կը հաստատէ թէ Արեւմտեան տէրու
թեանց և Աւստրիոյ պարտքն է՝ հարկ
եղած բարենորոգմանց գործողութիւնը
պահանջել :
Այս պատճառաւ սուտ կը հաւան

Կարողութեան վարդապետ

Տարին կիսուսնայ, որ ի մայրաքաղաքս գիտեալ շնորհիւ բերելով Պօլսոյ ազգայնոց, թէ լրագրոց և թէ տեսրակի միջոցաւ իրրև մի վարժ և յառաջադէմ աշակերտ ստուծեան, սուտ շինաց որ մեր վրայ մեծ մեծ շնորհեցիք. զԸՐպարտութեան անջրդի ամպեր չննաց որ մեր վրայ չդիզուցիք. շարժի շանցաւ որ քանի անդամ երթեալ եկելով Պատրիարքարանն շտապակապուցիք. բայց այժմ որ եկած Կեդր. վարչութեան անջև և ձեր դէմ կանգնած եմ ձեր ստորագրութեամբ վաւերացած տուժարներովս և արձանագրութիւններովս՝ յետս յետս կը քաշուիք, ծակամուտ կլինիք. միայն թէ երբ տեսաք՝ որ Միաբանութեան հերքումը ձեր ստուծեամբ յերկրած տասն և մէկ ամբաստանութեանց ճիւղերը ճըշմարտութեան տապարաւ Հայրենիքը ԸՐպարտ մէջ ճղակցուած ըրաւ, վերաւորեալ օրհասականի պէս Փունջ լրագրոյ մէջ վերստին դուրս դուրս հանեցիք, բայց շատ ողորմելի կերպիւ, քանզի կ'սկսիք առաջին մեծ մեծ բրդած սուտերնիդ վտարակցել, փոխել, յետս կոչել և նոր ի նորոյ փոքրիկ փոքրիկ սուտեր վիժել:

Առ ի, Գուռն քաղաքում շնորհակալեաց թելագրոյն ծայրն չըրկալով գտնել, հիմայ զայն « օտարի ձեռք արուած հանրագրի » կ'օրհնարիք. Առաքելոց վանոց Արժ. վանահօր մասին մեր վրայօք ըրած զրպարտութիւնդ ի նոյն ինքն յիշեալ վանահօր նամակն հերքեալ և խոյտուտակեալ տեսնելով՝ կ'ստուգանիք և չէք զիտեր թէ ինչ կ'աւանդուիք, Մուշ փաշաներուն սեղանակցելու համար գոնէ թշնամիներէս մէկն վրայ չըրկիք նշանակել, Գուռն եղի որ մի՛ գարմանար, վարդապետ, դեռ քննութեան ատենն չը բացուած, դեռ մեր իրարու դէմ չեկած լրագրոց մէջ վրած մեծ սուտերդ այժմ մէն փճացնել և յետ անուղ կ'պալտ. սակայն ինչո՞ւ կ'աճապարես, համբերէ՛, անեն զրպարտութեանց յետ անուտը լուս տեղն՝ նոր կուգայ: Բայց երանի՛ էր քեզ, վարդապետ, որ օրհնանակ լեզուդ այդպէս սուտեր ստեղծելու և խօսելու վարժեցնելուդ, սակաւ ինչ ճշմարտութեան և պարզ հայերէն խօսելու և գրելու մէջ վարժեցնէիր: Թէ որ մտքիդ ու ազգիդ կրնայ զարնել, հաճեցէ՛ք Փունջի երեք թերթի մէջ հրատարակեալ անո՞ճ, կցկատեր, իրար չառնել, հակասող և բան չհասկնող դրամադ. աչքէ անցունել վերջստին, որ կարծեմք մինչև անգամ դըպրոցական տղայոց ծաղրն կը արժէ վրանիդ: Այստե՛ս որ իրրև վարդապետ և աշակերտ ճշմարտութեան աշխատի սրտախօսութեան մէջ ստաջ անցար, մինչև որ ընկերդ իսկ զգուցելով յետ կեցան ցնորակո՞ծ սլանդիկ այդ յօդուածդ ստորագրելէ, ինչպէս և ինչ ինչ յօդուածօցըդ սրբագրելն և՛ սրբագրելն: միայն թէ ուրախ եմ, որ ստախօսութիւններդ մեր վրայ ես և որք ի վերջոյ միայն զձեզ խոյտուտակելու և դատաւարտելու պիտի ծառայեն: Երանի՛ էր քեզ, վարդապետ, նաև՝ որ փոխանակ իմ և Միաբանութեան միան կրծելու համար երկու անգամ տեղս վաղելուդ և Պատրիարքարանն ու Ազգը ձանձրացնելուդ՝ Մշոյ թշնամացեալ ժողովրդաց ծոճն ու ողբին ծծող և վանկերնիս շորս անգամ աւարող բարբարոսաց դէմ՝ այլիք բողբոջ: սակայն շնորհաբերեք զձեզ, զի չէիք կրնար մէկ կողմն վաճառել իսմայիլ բէկին և Օսմանին կողմուցել տալ, և միւս կողմն ալ անոնց դէմ՝ այսինքն ձեր դէմ բողբոջու ելնել: Այս մտքին ուրիշ հաստատելիքներս քննութեան ատենին կ'վերապահեմ, բայց դուք իսկ Փունջ լրագրոյ 1878 սեպտեմբեր 2 և հոկտեմբեր 4 թիւ թերթերուն մէջ մասնաճէք զձեզ, վարդապետ, որ ի հարաւ և ի հիւսիս կեցած քանի քանի բարբարոսաց անուան դէմ պաշտօնական կերպարանքէ գուրկ բողբոջ ըրած ժամանակնիդ, ձեր Տուռն՝ Ս. Կարապետի վանքն շորս անգամ կողողողող կնձան իսմայիլ բէկի և կուստոցի Օսմանի՝ ձեր բարեկամաց անուններն անդ ի կարգին կ'որոշիք կրտսմիք յիշելէ: Երկրին մէջ բարբարոսաց բարեկամ և առջնին Չաքարեան սրբապատեալ, իսկ սաս ի Պօլսոյ

պրտապետ բողբոջ ի լրագրի՛ Կարապետ ձայն բարբարոս յանապատի կը լինէ՛ք անչուս, որ իրիմեան Միաբանն ալ յիշեալ բիրտ ցեղապետ Օսմանի ձեռքով քշեցիք վանքէն: Այս յայտնութիւններն ընթերցողաց հազարած վայրկեանս չկարծէք թէ ձեր Փունջի մէջ դուրս առած բողբոջներ զառանցանցն պատասխանելու զիջած եմ կամ պիտի զիջանիմ: քաւ իրիմ, զայդ ամօթ կ'համարիմ ինձ. և մասնաւոր ինչ հարկ, քանի որ յԱռեան Քննութեան հասած ենք, ուր մի անդամ հրապարակաւ հրաւիրած եմ զձեզ, և այժմ ևս դարձեալ կ'հրաւիրեմ, միայն թէ այն հրատարակեալ չարկաղորդ չարակրտսանաց մէջ մէկ երկու տեղ դուք ինքնին ձեր ինչ ողի կրելն դուրս տալերնուդ համար, սակաւ ինչ լոյս ալ մեք կուզենք ստեղծ վրան: Կոյս՝ առանց ամաչելու կըսէք թէ « օ՛ն թէ մարդիկ. այլ և քարինք կը վերկայեն, որ ձեր դպրոցի գոնէն չենք անցերս: Այս՝ և կեղեցուց դուքն շանցնելու նուր վրայութիւնն ես ալ կուտամ. հիմայ կը մնայ ցարդ ձեր վարած առաքելական երանելի պաշտօնն, որ քաղաքաց և զիւրից դուներն Աւետարանու մըտնելիդ ու ելնելիդ, եկեղեցու և ազգին ո՛ր ստեղծումը ըրած ծառայութիւննիդ յանուանէ յիշատակել և ծանուցանել, որ մի՛ դուցէ՛ ազգն ևս ընդ մեզ մինչև վերջ անձամբ մնայ ձեր վարդապետական և առաքելական նահատակութեանց: Ապա թէ ոչ՝ մեր և կարծեմք մենուն զիտացան և սաս է, թէ դուք միւս վանահօրց, փոխանորդաց, միւս բանոց և կարգադրութեանց դէմ ըմբոստանալ, պաշտօն յախուտակել, կողողտել, ուտել խմելէ, հայհոյել և կըսելէ ի զատ՝ երբէ՛ք ուրիշ պաշտօն մի չէք ունեցած առաջնորդեալ ի Հոգւոյն Սրբոյ: Երկրորդ՝ կըսէք թէ՛ « Գնչ հարկ կար գիր տալ Յակոբի ձեռք և զրկել ի Պատրիարքարանն և կայն: Արդէն մեծ յանցանքնիս՝ այս է, ա՛նխիղճ վարդապետ, մեք ընդ բազմաց ձեր այդ սակալի մասնութիւնն շատուց ի վեր զիտացած էինք, բայց առ այժմ հրատարակեալ ի վեր հանել չէիք ուղիւ և ձեր ալ հիմա ինչ չար ողբով Յակոբը զրկելու խօսքն հրատարակելիք անեն մտքի կը գարնէ և մեք ալ կը բացատրենք: Գուռ, վարդապետ, եկաք վաճառ կողողտել տալու անօրէնութիւննիդ ծածկել, դուք եկաք ձեր ուրովայնի խնդիրն յառաջ վարել, իսկ Մշոյ չեցի սարկակազ ըսուած Յակոբը միաբանութեանս կողմէ կնքուած երկրի և վանքի հարստահարութեանց Տեղեկագիրն եկաւ Կեդրոնական վարչութեան մատուցանել, և որ ձեր անխիղճ մասնութեամբը՝ այսօր շորս ամսէ՛ աւելի է՝ որ ի բանտի կը տառապի, ամեն ազգային ըզգացումն ունեցողաց կարեկցութիւնն առ ինքն կը շարժէ և ձեր ալ շարժանդացութիւնն: Այլ հարցնեմ, առանց հարկի ձեր շարժողութեանց կարգին մէջ Յակոբին զրկելու յիշելով, բաց կերպիւ ըզմեզ ևս մասնաճիւղ ցուցնելէ ի զատ ուրիշ ինչ նշանակութիւն կրնայ ունենալ. զայն՝ և որ առաքելացն գնա, մատնեցիք և մատնել կուզէք. բայց օ՛ն արդ՝ զոր ինչ անեցողդ էք, վարդապետի արարէք: Գուռ ձեր ողբն ցուցուցիք, յայտնեալ վարչութեան և ազգին կը մնայ ձեր և մեր վրայ դատաստան կարել: Կարնոյ Գեր. Յարութիւն սրբագանն 1866ին Ս. Կարապետի վանոց բոլոր արժաթեղէնքն կուտելով 107 հօթա կը գտնէ, իսկ դուք 1875 ին վանքը դատարար կրկին կուէք և անկէ 28 հօթա ալ պահած կը գտնէք, ապաքէն չեմ հասկնար թէ ինչ կը շահէք չարիտանց սուտ խօսելէն և ազգը խաբելէն, ըսելով թէ՛ Ս. Կարապետի վանքն անօթոց և զգետուց կողմանէ հաւասար է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանոց: Վերջապէս, վարդապետ, առաջին հրաւերիս վրայ կրած խեղճութիւննիդ նշանակեցիք. եթէ նեւազգիք չըրցիք գտնել, ամօթ չէ՛ ձեզ համար, դո՛նէ՛ ճոտարի ձեռք արուած դո՛ւտութեան հանրագիրը ըսածնիդ յատեան Կեդրոնական վարչութեան հանել տուէք, այդ ալ Մուշն մինչև ի Բ. Գուռն ձգուած անոց թելագրելը չէ, որոյ ծայրը չըր-

նար գտնել, այլ կտոր մի թուղթ է, որ կամ ի Բ. Գուռն է, և կամ ինչպէս որ դուք կըսէք՝ Բ. Գուռնէն ի Պատրիարքարան զրկուած: Սակայն սրտերնիդ ամուր բանեցէք, մեր կողմն սուտաց բողբոջ ոչ նեւազգիք և ոչ հանրագիր կայ Բ. Գուռ կամ յայլ ուրիշ: Ուրեմն կրկին ներաւար ընդունելով, ինչպէս ի մօտայ և պաշտօնական, սկիզբէն ցայսօր որչափ որ մեծ և փոքր սուտ փշեցիք և փնջեցիք ի Փունջ լրագրի մի առ մի և կէտ առ կէտ սրբալիք ամբաստանութիւն ընել և առաջին տասն և մէկ կէտ հերքեալ ամբաստանութեանց նեւ կցելով, Կեդրոնական վարչութեան գրասեղանի վրայ դնել, ուր անչուս խաւարը լուսոյ առջևէն հարածեալ պիտի տեսնէք: Եթէ քաջ էք, եթէ սուտ չէք, եթէ վստահ էք ձեր չխայտաւակուելուն վրայ, պէտք է՝ որ անպատճառ այսպէս ընէք, ապա թէ ոչ՝ մեք պիտի պահանջուք և կէտ առ կէտ պիտի պահանջուք: Եթէ քանի որ դուք հրատարակած էք, ձեր սուտերը ձեր պարտն է ժողովել և ձեր ստորագրութեամբ վարչութեան մատուցանել: Գիտեմ, վարդապետ, դուք անոր համար այնքան սուտ սուտի վրայ նեճցուցիք և հրատարակեցիք, որպէս զի հաւարակազ մեքը մեր վրայ պըղտարելով և վարչութեան ցասումն շարժելով առանց հարցափորձի և քննութեան զմեզ ձգել տայիք. իսկ եթէ զիտայիք թէ ամեն խօսածնիդ և հրատարակածնիդ անպատճառ քննութեան բովէն պիտի անցնին, կարծեմ, դուք ալ այնքան սուտ խօսելու պիտի շերտակէք: Բայց զիտաք և իցէ, հաւարակազ նըշանաւոր խօսքն է. « Աստուած դահն ի սրբանէն և դամօթն յերեւելն շաանէ », կըսեն, Ամեն: Մարտի Եղեկապետ Ս. Կարապետի վ. Մշոյ 19 յուլիս 1878 . . . Խմբագիր . . . Զմիւռնիոյ առաջնորդ Գեր. Տ. Մեղիսեղեղի նորագասկ եպիսկոպոսն յառաջիկայ կիրակի օրը Ս. Պատարագ մատուցանելու պատրաստեալ ըլլալով ի Մայր Եկեղեցւոյ, կը խնդրեմք որ ի դիտութիւն բարեպաշտ ազգայնոց Ձեր պատուական լրագրոյն միջոցաւ սոյնը հրատարակել բնութեանիդ: Մասնք յարմանօք Ատենադպիր Ատենապետ Գր. Կ. Թարգման Կրդո. Յովսէփեան Կ. Պօլսոյ 12 յուլիս 1879 . . . Խմբագիր Էֆէնտի Մասիս օրագրոյ . . . Դպրոցավարաց-Արեւելեան ընկերութեան Տնօրէն-Խորհուրդս պարագ կը համարի հրատարակու իւր երախտագիրտական զգացմունքն և ջերմ շնորհակալիքը յայտնել առ Ամեն Սրբազան Պատրիարք Երուսաղէմի: Նորին Բարձր Սրբազնութիւնը հաճած է օրհնել մասնաւոր կնքակիով մը ընկերութիւնս, և յարգորել զինքըն յաշխատութիւն, և ընկերութեանս դպրոցական պէտքերը հոգալու համար յղած է նեւաւեալ դանազան օգտակար գրքերը, 517 կրտոր: Բաժնոյս եմք որ ազգին միւս բազմաբնիկ միաբանութիւնք ալ այս քաջալերիչ օրինակին հետեւելով չպիտի զլանան իրենց բարոյական և նիւթական օգնութիւնը ընկերութեանս: Օրինակ Մենտոր մանկանց 5 Աւետարան 5 Պատմութիւն բարոյական 5 Գործք Առաքելոց 5 Թուաբանութիւն 30 Եղիշ 5 Ընդհանրական 5 Բերական Գաղղիերէն 5 Հեղարան 100 Հրահանգ Սերոյ 10

Ճարտասանութիւն 30
Ուսումն պարտուց 40
Ուսումն Տրամաբանութեան 40
Պատմութիւն Եկեղեցական 2
Պատմ. Յովհ. Կաթողիկոսի 4
» Նոր Կտակարանի 4
» Սուրբ Գրոց 4
Սարմուս 6
Վարժութիւն 7
Քերական Հայերէն 200
Քերականութիւն Հայերէն 30
» Գաղղիերէն 20

Կը խնդրեմք, Տէր, որ բարեհաճելով հիւրընկալել զայս Ձեր ազգօգուտ թերթին մէջ:

Ընդունեցէք, Տէր, մեր կանխեալ շնորհակալիքը:

Ատենադպիր Ատենապետ Թ. Եղեկապետ Մ. Ռոֆայէեան Բանկալթի 18 յուլիս 1879 Տէր.

Ս. Յակոբայ անկերտացի վարժարանին հարցաքննութիւնք պիտի սկսին ամսոյ 23 ին և պիտի տեսնին մինչև 26, առաւօտուն ժամ 4:30 էն մինչև 4:30 և երեկոյն 7 էն մինչև 10 հետեւեալ կարգաւ:

Յուլիս 23 Բշ. Գրիստոնէական կրթութիւն, Հայերէն և Գաղղիերէն: Յուլիս 24 Գշ. Թուաբանութիւն, Պատմութիւն Սրբազան, Ազգային և Բնական:

Յուլիս 25 Գշ. Տաճկերէն, Աշխարհագրութիւն, Գծագրութիւն և Գեղարդութիւն: Յուլիս 26 Եշ. Հարցաքննութիւնք Նախկրթական առաջին և երկրորդ կարգաց:

Յուլիս 31 Գշ. Առաւօտուն ժամ 2:30 էն մինչև 5 պիտի կատարուի մրցանակաբաշխութեան հանդէսը:

Տեսչութիւնս վստահ ըլլալով թէ դպրոցատէր տղայիցք պիտի հաճին իրենց պատկառելի ներկայութեամբ խրատոյս տալ փութաջան աշակերտացս կանխաւ իւր շնորհակալութիւնը կը մատուցանէ:

Տեսչ. Ս. Յակ. Անկերտացի Տ. Կ. Օրհնեան

Ի Լ Ա Ն
Նիզամիյէ Կրդաք անպարը իւրն մէմհուր նուսուէսինէ թէ վիճիքէն միւսպետ օրուսնաք օն պէշ պին զըյէ Բէթիսո սապուրնին շերայիլթը մուգարբէրէսի իլէ պէհէր զըյէսի տէօրթ զըյ օն փարայա թալիպի էօհ տէսինտէ օրուպ թէմուղ բուսինին իկրմի տէօրախն ճի սար կիւնիւ գարարը գաթիսի վերիլէճէլնտէն, իլթիրայէ թալիպ օրանարըն եէվմի մէզբերտէ Տարը Ծուրայի ասքերիլէ կէմէրէրէ: 19 թէմուղ 1879 Պապը Սէրասքերի

Նիզամիյէ Կրդաք անպարը իւրն մէմհուր նուսուէսինէ թէ վիճիքէն միւսպետ օրուսնաք օն պէշ պին զըյէ Բէթիսո սապուրնին շերայիլթը մուգարբէրէսի իլէ պէհէր զըյէսի տէօրթ զըյ օն փարայա թալիպի էօհ տէսինտէ օրուպ թէմուղ բուսինին իկրմի պիրինճի ճուսն իրթէսի կիւնի միւսնաք սար իճրա օրուսնաք ճաղընտան, թալիպ օրանարըն եէվմի մէզբերտէ տարը Ծուրայի ասքերիլէ կէմէրէրէ: 19 թէմուղ 1879 Պապը Սէրասքերի

Ներգամայի շարքը անպարը ինչ նա... նը աղից ֆուրուսիսը ինչուն օթուց պին գանձարտան գրգռ պին գան թարա գատար չուրութը մուգարը...

17 թեմուզ 1879 Պապը ընդհանրելի

Ներգամայի երգաք անպարընա պեր սենն զարգընտա լուգուսի մրգատըր թեպիմ օլունմադ իւղրէ միւպայեա...

17 թեմուզ 1879 Պապը Սերասքերի

Ե.Չ.Ի

Նորայրի Ն. Բիւզանդացոյ Գաղղիերէն-Հայերէն նոր և ընդարձակ լատարանին առաջին թերթին հըրատարակուած ըլլալով հանդերձ յայտարարութեամբ...

Բաժանորդութեան պայմանները քանի մ'օրէն լրագրաց մէջ պիտի ծանուցուին:



ԱՅՆԻ ՎԻԿՈՐԸ

Ով որ իր մաղերուն թափիլը չուզեր, «Այրի վիգոր» կոչուած մաղի անուշահոտ չուրէն գործածելու է ուրիշ ամեն տեսակ մաղի չուրերը կամ իւրերը որ մաղ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են...

ԻՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ Կ. Ս. ԻԻԹԻՆՅԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՈՍԿՈՎ ԼՐԱԳՐՈՅ ԳՐԱԿԱՆ ԿՈՐԹՈՍԱՆ

ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ ՇՈՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ 1879 ՅՈՒԼԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԱԼ

ՄԻՆՁԵՆ ԾՈՒԼԻՍ 31 ԲՈՍՓՈՐԷՆ ԻՉՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with columns for date (Ժամ), time (Երեւոյան էջեր), and location (Թեմ). Lists various church services and their times.

Table with columns for date (Ժամ), time (Երեւոյան էջեր), and location (Թեմ). Lists church services.

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with columns for date (Ժամ), time (Երեւոյան էջեր), and location (Թեմ). Lists church services.

ԱՐԷՆԻՆԻ ԷԷՂ

Table with columns for date (Ժամ), time (Երեւոյան էջեր), and location (Թեմ). Lists church services.

ԱՐԷՆԻՆԻ ԷԷՂ

Table with columns for date (Ժամ), time (Երեւոյան էջեր), and location (Թեմ). Lists church services.

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի բացի կիրակի և սոս օրերէ:

Բաժանորդագրութեան տեղն է Ղաւթի Սանադգըրար ճատտէսի թիւ 198, Նօրո խան Մասիսի խմբագրատունը:

- List of names and titles: ՉՄԻՒՌՆԻՍ, Ստեփան էֆ. Տէտլեան, ՆԻԿՈՄԻՒԻՍ, Խոսրով Ե Եսիկեան, ՊՐՈՒՍ, Ստեփան էֆ. Թանկերեան, ՌՈՏՈՍԹՕ, Արթ. Տ. Արիստակէս աւագ քահանայ ճէպեան, Ա.ԳՐԻՍՆՈՒՊՈԼԻՍ, ԱՄՄՈՒՆ, ՏՐԱՊԵՏՈՆ, Ս. Էթմէքեան էֆէնտի, ԱՄՄՈՒՆ, ՍԵՐԱՍՏԻԱ, Նազարէթ էֆ. Յ. Իսթամուլեանց, ԵԻՊՈՒԿԻՍ, ԲԱՐՏԵՐԻ և ՏԵՐՍԻՄ, Կիրակոս էֆ. Ս. Ղազանճեան, ԵՐՁՆԿԱ, Թադէոս էֆ. Բագրատունի, ԿԱՐԻՆ, Կարապետ Ե Զաքարեան, ՄՈՒՇ, Միքայիլ Ե ֆօթիկեան, ՎԱՆ, ԲԵՐԻՍ, Սեդրակ Ե Խարաճեան, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, Թադէոս էֆ. Թաշճեան, ԵԻՊՈՒԿԻՍ, Գեորգ էֆ. Ոսկերչեան, ՄԱՐՍԵ, ԶՕՐԵՆ, Յէրհամ աղա Ս. Յէրհամեան, ՏՓԻԻՍ, Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան, ԿԱԿԱԹԱ, Պետրոս աղա Հէքիմեան:

ԻԽԿԻՆՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with columns for date (Ժամ), time (Երեւոյան էջեր), and location (Թեմ). Lists church services.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with columns for date (Ժամ), time (Երեւոյան էջեր), and location (Թեմ). Lists church services.